

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
36

Yerevan – 2023

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
36

Ереван – 2023

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

36

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագրական խորհուրդ՝ Գոհար Մուրադյան (գլխավոր խմբագիր), Վահան Տեր-
Ղևոնդյան, Կարեն Մաթևոսյան, Օլգա Վարդազարյան, Վահե Թորոսյան, Թեո վան
Լինտ, Արմեն Մուխաֆյան, Արտաշես Շահնազարյան, Գուրգեն Գասպարյան,
Արուսյակ Թամրազյան, Հայկ Համբարձումյան:*

*«Բանբեր Մատենադարանի» 36, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ին-տ. Երևան, 2023, 304 էջ:*

**ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՁԵՎԱԿԱԿՁՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ
«ՈՂԲ ԵԴԵՍԻՈՅ» ՊՈՆՄՈՒՄ**

Բանալի բառեր՝ «Ողբ եդեսիոյ», պատկերավոր համեմատություն, ձևակազմական կաղապար, փոխաբերություն, նախադրություն, ձևաբանական արժեք, միջուկային անդամ, գունանուն բաղադրիչ, տարբերակներ, ոճական արժեք:

Լեզվի զարգացման որևէ գոյավիճակի համաժամանակյա տիպաբանության որոշման համար (ձևաբանական, շարահյուսական, ոճական և այլն) էական նշանակություն ունի տվյալ ժամանակաշրջանի հեղինակի երկերի պատմագեղարվեստական խոսույթի վերլուծությունը, որի շրջանակների մեջ մտնում են քերականական համակարգի, լեզվաքերականական իմաստների արտահայտման միջոցների, լեզվական միավորների կառուցատիպերի ու դրանց գործառական արժեքի մեկնաբանությունն ու հարակից այլ հարցեր:

Այդ առումով XII դարի բազմաշնորհ հայրապետ Ներսես Շնորհալու արձակ և չափածո քերթվածքները հարուստ նյութ են ընձեռում հետազոտողներին՝ բնութագրելու հայերենի տվյալ ժամանակահատվածի քերականական համակարգն ու լեզվատճական իրողությունները՝ համաժամանակյա կտրվածքով: Մյուս կողմից՝ այդ կարգի իրողությունները կարող են համեմատության եզրեր դառնալ լեզվի տարբեր գոյավիճակների համատիպ իրողությունների նկատմամբ՝ տարժամանակյա ուսումնասիրությունների համատեքստում:

Սույն հոդվածով անդրադառնալու ենք Ներսես Շնորհալու «Ողբ եդեսիոյ» պոեմում գործածված պատկերավոր համեմատությունների (ՊՀ) իմաստակառուցվածքային քննությանը՝ փորձելով ցույց տալ պոեմում գործածած արտահայտությունների ձևակազմական կաղապարները, ՊՀ-ները դասակարգել ըստ

* Խ.Արսլանյանի անվ. ՀՊՄՀ, լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ, Բ. Գ. Պ., պրոֆ., lingualal51@mail.ru, հոդվածը ներկայացնելու օրը՝ սեպտեմբերի 18, 2023, հոդվածը գրախոսելու օրը՝ 15 նոյեմբերի, 2023:

ձևաբանական արժեքի, ըստ միջուկային անդամի իմաստային նշանակության, ըստ տարբերակների և այլն¹:

Հարուստ է Շնորհալու պատկերային մտածողության զինանոցը: «Նրա պատկերային մտածողության ակունքը ոչ միայն Աստուածաշունչն է, - գրում է գրականագետ Պ. Խաչատրյանը, - այլև կենդանի բնութիւնը, այլև Հայոց պատմագրութիւնը եւ, ամենից առաջ, Խորենացին ու Եղիշէն: Հին Կտակարանի էպիկական հերոսները, սաղմոսներից առնուած առանձին դարձուածքներն ու համեմատութիւնները, Վարդանի ճառի ոգեշունչ տողերը, առակատիպ խրատները զարմանալի բնականութեամբ գալիս մտնում են Ողբի ընդհանուր հիւսուածքի մէջ եւ ստեղծում բանաստեղծական այնպիսի ոճ, որը մերթ հերոսական է, մերթ ողբերգական, մերթ հռետորական է ու վսեմ, մերթ մեղմ ու անմիջական»²:

Յանկացած հեղինակի պատկերային մտածողության կարևոր բաղադրիչներից են ՊՀ-ները: Այդ կառույցները լեզվաոճական որոշակի արտահայտություններ են, որոնց հիմքում ընկած է համեմատությունը, որը, իբրև փոխաբերության մի տեսակ, արտահայտում է համեմատելի հատկանիշ՝ երկու տարասեռ առարկաների և նրանց հատուկ ընդհանուր հատկանիշի հարաբերության միջոցով: Այդ կարգի կապակցությունները կոչվում են նաև համեմատություն-դարձվածային միավորներ կամ համեմատություն դարձվածային արտահայտություններ³: ՊՀ-ները լայնորեն գործառվում են մեր լեզվի բոլոր շրջաններում, դասական և հետդասական հայերենի գրաբարալեզու երկերում, միջին հայերենի գրական հուշարձաններում, արդի գրական հայերենում՝ բնութագրվելով ոճական որոշակի դերով, որ պայմանավորված է ժամանակաշրջանի լեզվամտածողական յուրահատկություններով:

Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմում ՊՀ-ները զգալի տեսակարար կշիռ ունեն՝ որպես պատկերավորման համակարգի բաղադրիչներ. պատկերավորման համակարգը ցանկացած հեղինակի գեղարվեստական մտածողության առանցքն է, որը ստեղծագործությանն օժտում է արվեստի ուժով:

Քննվող երկում ՊՀ-ները կազմված են «իբրև», «քան», «որպես», «զերդ», «հանգոյն», «գունակ», «նման», «քան» և այլ նախադրություններով, ինչպես՝ «որպէս գայլք ի հօտ գառանց», «որպէս հարսն ի տաճարին», «տխուր դիմօք՝ զերդ ի սգի», «իբրեւ գազանս վայրենի», «իբրեւ փեսայ յառագաստին», «ափան գետոց աւզի գունակ», «հանգոյն վերինն Սիրնի», «քան զձին սպիտակ» և այլն:

¹ Բնագրային օրինակների սկզբնաղբյուր՝ Մատենագիրք Հայոց, ԻԱ հատոր, ԺԲ դար, Ներսէս Շնորհալի, գիրք Ա, Երևան, 2018:

² Նույն տեղում, էջ 147:

³ Լ. Խաչատրյան, Լ. Ավետիսյան, Համեմատություն դարձվածային արտահայտությունները հայերենում (V-XVI դդ.), Երևան, «Զանգակ-97», 2015:

«Ողբ Եղեսիոյ» երկի պատկերավորման համակարգի ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնելու ՊՀ-ների հետևյալ կառուցատիպերը.

1. Նախադրություն + հորվածե կաղապարով կապակցություններ, որոնք կոչվում են միագագաթ կառույցներ («որպէս եւ բանն Տէրունին, իբր ատամունքն վարագին»):
2. Նախադրությամբ կառույց + ածական կամ բայ կաղապարով կապակցություններ, որոնք կոչվում են երկգագաթ կառույցներ («յորդ եւ առատ նման գետի, եւ փոխանակ որդան զգետի՝ սեաւ զգենում գոյն ախրելի»):

Այս ՊՀ-ներում տարբերակվում են երկու կարգի կառուցատիպեր՝ ըստ ծավալի.

ա) Համառոտ կամ չծավալված, նման ՊՀ-ները միագագաթ կառույցներ են՝ նախադրություն – խնդիր բաղադրիչներով, ինչպես՝ «զերդ ի սգի», «որպէս զղրախան» և այլն:

բ) Ընդարձակ կամ ծավալումով. նման ՊՀ-ները երկգագաթ կառույցներ են՝ նախադրության խնդրի լրացումներով հանդերձ, ինչպես՝ «զերդ մայր՝ որդովք բերկրեալ», «իբրեւ զբու յաւերակի»⁴ և այլն:

Պոեմում գործածված ՊՀ-ները կարելի է դասակարգել տարբեր սկզբունքներով՝ ըստ ձևաբանական արժեքի, ըստ միջուկային անդամի իմաստային նշանակության, ըստ տարբերակների և այլն:

1. Ըստ ձևաբանական արժեքի՝ կարելի է առանձնացնել հետևյալ ՊՀ-ները.

ա) Գոյականական ՊՀ-ներ

Գոյականի արժեքով ՊՀ-ները պարտադիր ունենում են գոյական բաղադրիչ, որ հանդես է գալիս իբրև նախադրության խնդիր (որոշյալ կամ անորոշ առումով), ինչպես՝ «իբրև զբու», «որպէս մարդ», «զերդ Երիֆովն» և այլն: Բնագրային օրինակներ.

«Բայց այժմ թողեր զիս ամայի, իբրև զբու յաւերակի / կամ որպէս մարդ անօգնական» (160): «Եւ որպէս մայրք կիբանանու եւ միանձունք քոյդ նահանգի» (160): «Որպէս եւ բանն Տէրունին, յառաջագոյն գուշակէցին» (183): «Իբրև զշունք հասին եւ ցուլքն գէրք պաշարեցին» (182): «Որպէս տանջանքն Եգիպտոսին շար հրեշտակաւք լինել ասին» (192): «Եւ զքաղաքս քո՝ յաւեր, զերդ զԵրիֆովն՝ հիմն ի վեր» (195): «Զերդ Գողիաթ Փղշտացին յոյժ ի հասակդ փքա-

⁴ Իբրև զբու յաւերակի ՊՀ-ն Աստվածաշնչից է (Սաղմոս ձԳ 16: Եսայի, ԺԳ 8):

ցեր» (195): «Որպէս ծաղիկ բողբոջիցիք, սաղարթագեղ պաճուճիցիք» (198):

բ) Ածականական ՊՀ-ներ

Այս կարգի ՊՀ-ները հարաբերակից են ածականին կամ ածականի դերով հանդես եկող այլ խոսքի մասերի, արտահայտում են հասկացություն, ունեն անվանողական արժեք և զուրկ են հաղորդակցական դերից: Օրինակներ.

«Հեղում արտօսը անշափելի, յորդ եւ առատ նման գետի» (167): **Իբրու հմուտ լալեաց բանի եւ քաջ տեղեակ այրման սրտի (164):**

գ) Բայական ՊՀ-ներ

Բայական ՊՀ-ների գերադաս անդամը բայ է. այդպիսի արտահայտություններն ունեն հաղորդակցական դեր: Շնորհալու երկում դրանք հանդես են գալիս ստորոգումով և առանց ստորոգման:

- Ստորոգումով (հաղորդակցական) կառույցներ.

«Նստիմ ի սուզ ի տան մթի, որպէս արէն է սգաւորի» (167):

- Առանց ստորոգման կառույցներ. դրանք հաղորդակցական դերն արտահայտում են հնչերանգի միջոցով, քանի որ ստորնգյալը զեղչված է լինում: Օրինակներ՝

«Կայն եւ արձակ նստեալ յաթոռ / որպէս ի կառս՝ թագաւոր» (169): «Եհեղ զարին իւր ընդ նոսին / որպէս զՅովնան՝ ի փոր կիտին» (182): «Որ զիմ տղայս վայելչական փաղաղեցեր զերդ զգազան / Եւ նստուցեր զիս ի մթան, իբր զմեռեալ ի գերեզման» (193):

դ) Մակբայական ՊՀ-ներ

Մակբայի արժեքով ՊՀ-ները ձևավորվում են առանց մակբայական բաղադրիչի, քանի որ մակբայները, տվյալ դեպքում, չեն դառնում նախադրությունների լրացում, ինչպես՝ իբրեւ զառաջեաւ, որպէս զտիւ և զգիշեր և այլն: Այդպես են կազմվում նաև մակբայի արժեքով դարձվածքները՝ արյունն աչքերին, մի գեղեցիկ օր, սրտի խորքից, գրչի մի հարվածով, հոգու խորքում, մի մարդու պես և այլն⁵:

Մեր ընտրանքում եղած մակբայական ՊՀ-ները տարբեր կառուցատիպերի են:

- Նախադրություն + հոլովածև կառույցներ.

Եւ ես բազմեալ զերդ թագաւոր, կայի ի մէջ հանդիսաւոր (169): Հնչեն զերդ հողմն հիւսիսակ, զամպն վարեն զհակառակ (201): Փողս եւ գոսերս գոչէին, իբ-

⁵ Պ. Բեղիբյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1973, էջ 159-160:

րեւ յամպոցն որոտային (178): Քանզի նստիս որբ եւ այրի, / տխուր դիմաւք՝
զերդ ի սզի (164):

- Նախադրություն + հոլովաձև կառույցի ընդարձակում.

Այսպիսի կառույցներում լրացումները լինում են երկու տեսակի:

Մի դեպքում առկա են անվանական անդամի լրացումներ, ինչպես՝

«Եհեղ զարիւն սրբոց երկրի, հոսեաց նման ջրոց գետի» (165): Իբր ատա-
մունքն վարազին, բանիւ զիրեարս սրէին» (175): «Զարիւն սրբոց յերկրի հեղին,
որպէս հոսանք ջուրց վտակին» (181): «Եհեղ զարիւն իւր ընդ նոսին նման Յու-
դա Մակաբէին» (182): «Իբրեւ զշունս կատաղիս յորսոց վերայ յարձակէին»
(186): «Անձամբ տուեալ զանձն իւր ի մահ, իբր յաւրինակ հատից նորին»
(182):

Երկրորդ դեպքում առկա են բայական անդամի լրացումներ.

«Եւ որպէս գայլք ի հօտ գառանց՝ ի մէջ նոցունց անկանէին» (178): «Որպէս
առիւծ՝ ընդ նապաստակ, զհետմտեն նոցա երագ» (201):

2. Ըստ միջուկային անդամի իմաստային նշանակության՝ զանազանվում են
հետևյալ հիմնաբաղադրիչով ՊՀ-ները՝

ա) Գունանուն բաղադրիչով ՊՀ-ներ

Հայերենում գունանուններն ունեն որոշակի դարձվածակազմիչ դեր և ըստ
այդմ հանդիպում են նաև պատկերավոր համեմատությունների արտահայտու-
թյան պլանում:

Շնորհալու երկում հանդիպող ՊՀ-ներում իբրև գունանուն բաղադրիչներ
հանդես են գալիս սևաւ, սպիտակ, կարմիր միջուկային գունանունները և վեր-
ջինիս եզրային անդամը՝ որդան⁶: Հեղինակը գունանունները զուգորդում է այն-
պիսի գոյականների հետ, որոնք իրենց հերթին իմաստաբանորեն ուղղագիծ հա-
րաբերության մեջ են գտնվում գունանուն բաղադրիչների հետ: Այդպիսի կա-
պակցությունների իմաստային հիմքում ընկած է տվյալ գունային ենթադաշտի
և համեմատելի առարկայի գունային հատկանիշի ընդհանրությունը⁷:

Այսպես, կարմիր գունային ենթադաշտին հարում է արիւն բառն իր գունա-
յին երանգով, որի հետևանքով հնարավոր է դարձել ի գոյն արեան կարմիր ՊՀ-
ի բաղադրիչների իմաստային զուգորդելիությունը: Ընդ որում, Շնորհալու պոե-
մում կարմիր (նաև սևաւ) գունանուն բաղադրիչով ՊՀ-ները հանդիպում են

⁶ Հայերենի գունանունների մասին տե՛ս Ս. Գրիգորյան, Հայերենի գունանունները և նրանց լեզ-
վաոճական արժեքը, Երևան, «Նաիրի», 1998:

⁷ Լ. Խաչատրյան, «Գունանուն բաղադրիչով համեմատություն-դարձվածային միավորները
գրաբարում (ըստ Աստվածաշնչի)», «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Վանաձոր,
2003, № 1, էջ 22-24:

առանց նախադրույթյունների, հմմտ. «**Ի գոյն արեան կարմիր փայլիք, զոր ինքնակամ ձերով հեղիք»** (199): «Որ անապատն էիր վայրի, եղեր նման փթթեալ ծաղկի, պայծառացար ի գոյն վարդի» (162):

Սեաւ գունանունը փոխաբերական իմաստով նշանակում է «գժքախտու-թյուն, վիշտ, տխրություն, թախիծ», հետևաբար հնարավոր է դարձել նրա գործածությունը «սեաւ զգեմում գոյն տխրելի» ՊՀ-ի բաղադրիչների իմաստային զուգորդելիությունը, ինչպես՝ «Եւ փոխանակ որդան զգեստի՝ սեաւ զգեմում գոյն տխրելի» (167):

Սպիտակ գունանվան ենթադաշտին աղերսվում են ձիւն, լոյս, կաթն, եղեամն և այլ բառեր, որոնց հետ սպիտակ գունանունը կազմում է ՊՀ-ներ՝ «համեմատելի առարկայից ավելի սպիտակ՝ ճերմակ» նշանակութեամբ: Հմմտ. «Արդ, քան զձիւն սպիտակ լինիք եւ քան զկաթն մածանիք, Անճառ լուսով լուսաւորիք եւ թագ ի գլուխ պսակեսչիք» (199):

բ) Կենդանու, սողունի անուն և թռչնանուն բաղադրիչներով ՊՀ-ներ

Շնորհալու երկում հանդիպում են այս կարգի բաղադրիչներով ձևավորված որոշակի ՊՀ-ներ, որոնք իմաստային յուրահատուկ կոլորիտ են ստեղծում՝ պայմանավորված այդ բաղադրիչների փոխաբերական իմաստներով⁸:

Իբրև կենդանանուն բաղադրիչներ՝ գործածվում են առիծ, նապաստակ, գայլ, վարագ, գառն, շուն, օձ, բու և այլ բառեր: Ինչպես նշեցինք, այդ կարգի ՊՀ-ների գեղարվեստական արժեքը պայմանավորված է նրանց բաղադրիչների վերաիմաստավորված նշանակութուններով. օրինակ, առիծ, վարագ, գայլ բառերը խորհրդանշում են կործանարար ուժ, գիշատչի հատկություն, ինչպես՝

«Որպէս առիծ՝ ընդ նապաստակ, հետմտեն նոցա երագ»: «Կամ զերդ առիծ գոչէ առակ, փախչին էրէքն անհակառակ» (201): «Իբր ատամունքն վարագին բանիւ զիրեարս սրէին» (175)⁹:

Գայլը և շունը՝ համապատասխանաբար՝ հոշոտողի և կատաղության հատկանիշ, ինչպես՝ «Եւ որպէս գայլք ի հաւտ գառանց ի մէջ նոցունց անկանէին» (178): «Իբրև զշունս կատաղիս յորսոց վերայ յարձակէին» (186):

Օձը՝ որպես վտանգի, նենգության խորհրդանիշ, ինչպես՝ «Սողայր եւ գայր նման օձին եւ նենգաւոր թիւնաւորին՝ Առ ի խայթել գարշապարին» (171):

Գառն ու նապաստակը՝ թուլլի ու տկարի, վախկոտի հատկություն, ինչպես՝

⁸ Կենդանու անուն բաղադրիչներով դարձվածքների ֆննդությունը տե՛ս Մ. Կարապետյան, «Կենդանու անուն պարունակող դարձվածքները անգլերենում և հայերենում», Գարձվածաբանության խնդիրներ. գիտաժողովի նյութեր, Երևան, «Զանգակ – 97», 2003:

⁹ Վերաբերյալ օրինակներում առիծ – նապաստակ, գայլ և գառն զույգերն արտահայտում են ընդգծված հակառակի իմաստներ: Շնորհալու երկի ՊՀ-ների իմաստային հարաբերությունների ֆննդությունը սույն հոդվածի շրջանակներից դուրս է. այն առանձին ֆննդության առարկա կարող է դառնալ:

«Եւ որպէս գայլք ի հօտ գառանց՝ ի մէջ նոցունց անկանէին» (178): «Որպէս առիւծ՝ ընդ նապաստակ, զհետմտեն նոցա երագ» (201):

Բու թռչունը՝ որպէս մենակուծյան և շարագուշակ բախտի խորհրդանիշ, ինչպէս՝ «Բայց այժմ թողեր զիս ամայի, իբրեւ զբու յաւերակի» (160):

գ) Հատկանուն բաղադրիչով ՊՆ-ներ

Շնորհալու երկում գործածված հատկանուն բաղադրիչներով ՊՆ-ները կարելի է բաժանել երկու կարգի՝ անձնանուններով և տեղանուններով կառույցներ:

- Անձնանուն բաղադրիչով կազմված ՊՆ-ների հենակետային միավորները Աստվածաշնչյան հատկանուններ են, ինչպէս՝ Գողիաթ, Յովնան, Յուդա և այլն: Օրինակներ՝ «Զերդ Գողիաթ Փղշաացին յոյժ ի հասակդ փքացեր» (195): «Քան զՓարաուն Եգիպտացին խիստ եւ վայրագ սրտիւ եղեր» (195): «Եհեղ զարիւն իւր ընդ նոսին նման Յուդա Մակաբէին, որպէս զՅովնան՝ ի փոր կիտին» (182):
- Տեղանունները նույնպէս վերցված են Աստվածաշնչի դիպաշարերից, ինչպէս՝ Երիֆով, Սիոն, Ադեմ, Եդեմ և այլն: Օրինակներ՝ «Եւ զքաղաքս քո՝ յաւեր, զերդ զԵրիքովն՝ հիմն ի վեր» (195): «Հանգոյն վերինն Սիոնի, անհամեմատ երկրաւորի» (160): «Ոռոգելով արեամբ նորին, որպէս զգրախտն, որ յԱդենի» (159): «Բազմագունի տունկ յօրինէր, որպէս զգրախտն, որ յԵդեմ էր» (168):

դ) Բնության երևույթների անվանումներով ՊՆ-ներ

Այս կարգի բաղադրիչները բնորոշվում են ծավալային ընդգրկումով՝ որպէս անհաշվելի առարկաներ (ծով, աստղ, երկինք, ձիւն, ալիք, գետ, աւազ), որոնք Շնորհալու գեղարվեստական խոսույթում ունեն մակերային-գրոտեսկային նշանակություն: Հմմտ.

«Իբրեւ զծովու ալեաց կուտակ, բորբոքելով գան խիստ ու բարկ / Ափան գետոց աւղի գունակ կամ զերդ աստեղք երկնից ի կարգ / Լնուն զամեն յերկրի յատակ որպէս զձիւն աստափատակ» (201):

3. Ըստ տարբերակների տիպերի՝ Շնորհալու երկում հանդիպում են բառային (հոմանշային), քերականական (ձևաբանական և շարահյուսական) և ծավալային ՊՆ-ներ¹⁰, որոնք իրենց կառուցատիպերով ամբողջացնում են հայերենի համատիպ կառույցների շրջանակները:

ա) Բառային տարբերակներն այնպիսի կապակցությունների զույգեր են, որոնք միմյանցից տարբերվում են հոմանշային որևէ բաղադրիչով. կապակցություններն ունեն իմաստային որոշակի մերձավորություն:

¹⁰ Հայերենի դարձվածային տարբերակների մասին տե՛ս Պ. Բեղիրյան, նշվ. աշխ., էջ 213-216:

Հմմտ. «Իբրեւ գազանս վայրենի ի մէջ հաւտիցն անկանէին» (180) – «Եւ որպէս գայք ի հօտ գառանց՝ ի մէջ նոցունց անկանէին» (178) – «Որ զիմ տղայս վայելչական փաղաղեցեր զերդ զգազան» (193)՝ (գազան – գայլ, իբրեւ – որպէս – զերդ): «Որ անապատն էիր վայրի եղեր նման փթթեալ ծաղկի» (162) – «Քանզի անցին ըստ երազի, որպէս ծաղիկ ամարայնի» (165)՝ (փթթեալ – ամարայնի): «Որպէս մայրք Լիբանանու են միանձուկք քոյղ նահանգի» (160) – «Եւ որպէս փայտ ինչ անտառի յանաւրինաց կոտորէին» (177)՝ (մայրի – փայտ): «Որ անապատն էիր վայրի, եղեր նման փթթեալ ծաղկի, պայծառացար ի գոյն վարդի» (162)՝ (ծաղիկ – վարդ): «Եւ նստուցեր զիս ի մթնն, իբր զմեռեալ ի գերեզման» (193) – «Զորս ընդ քարինսն հոսէին իբրեւ զգէշ անասնային» (181)՝ (մեռեալ – գէշ):

Քառային տարբերակներ ստեղծելիս Շնորհալին կիրառել է էլլիպսիսի (կրճատման) հնարը՝ միօրինակ կառույցներից խուսափելու և պատումի ռիթմը պահպանելու համար: Հմմտ. Հեղում արտօսը անշափելի, չյորդ եւ առատ նման գետի» (167)՝ (յորդ նման գետի և առատ նման գետի): «Որպէս զայգի մեծ տաշտաւոր կամ բարունակ ողկուզաւոր» (169)՝ (որպէս զայգի և որպէս բարունակ): «Սողայր եւ գայր նման օձին եւ նենգաւոր թիւնաւորին» (171)՝ (նման օձին և նման նենգաւոր թիւնաւորին):

Շնորհալու երկում հանդիպող որոշ բառային տարբերակների առանցքային բաղադրիչները դիտվում են համատեքստային հոմանիշներ, ինչպես՝ «Որպէս ի գետ կամ ի ծովի՝ վերայ գլխոցն լեղային» (180)՝ (գետ – ծով): «Կուտէին իբրեւ զշեղջս անհնարին, Կամ յօրինակ մայրից փայտին՝ միմեանց վերայ դիզանէին» (170)՝ (շեղջ – փայտ):

բ) Քերականական տարբերակներն առաջանում են կառույցների բաղադրիչների ձևաբանական կամ շարահյուսական հատկանիշների հիման վրա: Կարելի է առանձնացնել քերականական տարբերակների հետևյալ տեսակները:

Ա. Շնորհալու երկում հանդիպող ձևաբանական տարբերակների հիմքում ընկած են հետևյալ գործոնները.

- Համեմատելի գոյականների որոշիչ հոդով և անորոշ առումով գործածուիթյուններ.

«Փաղաղեցեր զերդ զգազան» (193) և «Իբրեւ գազանս վայրենի ի մէջ հօտիցն անկանէին» (180):

- Համեմատելի գոյականների տարբեր հոլովներով արտահայտուիթյուն, հմմտ.

«Եւ որպէս փայտ ինչ անտառի կոտորէին» (177) և «Կամ յօրինակ մայրից փայտին՝ միմեանց վերայ դիզանէին» (179):

- Համեմատելի գոյականների հայցական հոլովով և ուղղականաձև հայցականով գործածություն.

«Իբրևս զշունս յորսոց վերայ յարձակէին» (186) և «Քանզի իբրևս զշունք հասին» (182):

Բ. Շարահյուսական տարբերակները ձևավորված են ՊՀ-ների բաղադրիչների շարահասական դիրքի փոփոխություններով, ինչպես՝

«Եւ փոխանակ որդան զգեստի, սեաւ զգենում գոյն տխրելի» (167) (Սեաւ գոյն զգենում) և «Ի գոյն արեան կարմիր փայլիք» (199) (Կարմիր փայլիք ի գոյն արեան):

գ) Ծավալային տարբերակները հանդես են գալիս բաղադրիչների քանակային կազմի փոփոխություններով. դրանց (տարբերակների) եզրերը հանդես են գալիս համառոտ և ծավալուն կառույցներով: Ծավալուն տարբերակները ձևավորվում են բառով, բառակապակցությամբ կամ նախադասությամբ:

- Ծավալումը՝ բառով.

«Իբրևս զշունք» (182) // «Իբրևս զշունս կատաղիս» (186): «Զերդ զերիքովն // զերդ երիքովն հիմն ի վեր» (195):

- Ծավալումը՝ բառակապակցությամբ.

«Զերդ մայր // զերդ մայր՝ որդուվք բերկրեալ յորդոր» (169):

- Ծավալումը՝ երկրորդական նախադասությամբ.

«Քանզի նման ես դու մկան, որ սատակմամբ պղծէ զթան,

Կամ աղտեղի կոյր խլրդան, որ կայ յանլոյս խորս մթան,

Որ ի ծածուկ, ՚ւ ոչ յայտնական, փորէ զգեստինն քեզ նման,

Կամ զերդ թրթուր զազրաբերան, թիւնօք դեղէ զբուրաստան» (192):

Վերջին օրինակը Շնորհալու ոճի ինքնատիպ արտահայտություն է՝ կապված ՊՀ-ների ծավալման իրողության հետ: Այսպես, առաջին ՊՀ-ն հաղորդակցական միավոր է («Քանզի նման ես դու մկան»), երկրորդ ՊՀ-ի արտահայտության պլանում գեղչված է նախադրությունը՝ «նման» («Կամ աղտեղի կոյր խլրդան»), երրորդ ՊՀ-ն անվանողական միավոր է («Կամ գերդ թրթուր զազրաբերան»): Ոճական այս հնարանները բնորոշ են չափածո խոսքին, որոնք պատումին հաղորդում են գեղարվեստական լիցք:

Եզրակացություն

ՊՀ-ների ձևակազմական կաղապարները որոշակի արժեք ունեն ներսես Շնորհալու «Ողբ եղեսիոյ» պոեմի ոճական համակարգում. դրանք բացահայտում են հեղինակի ոճի յուրահատկությունները, որոնք, պահպանելով հին հայերենի կառույցների ձևակազմական օրինաչափությունները, միաժամանակ ի

հայտ են բերում նոր որակներ՝ պայմանավորված հեղինակի լեզվամտածողական յուրահատկություններով ու խոսքակերտման ինքնատիպությամբ:

ՊՀ-ների ուսումնասիրությունը բացահայտում է նրանց բնորոշ հետևյալ հատկանիշները.

ա) Կազմված են «իբրև», «քան», «որպես», «զերդ», «հանգոյն», «գունակ», «նման», «քան» և այլ նախադրություններով:

բ) Ունեն հետևյալ կառուցատիպերը.

- նախադրություն + հոլովածև կաղապարով,
- նախադրությամբ կառույց + ածական կամ բայ կաղապարով:
Ըստ ծավալի՝ տարբերակվում են երկու կարգի կառուցատիպեր.
- համառոտ կամ շծավալված (միագագաթ կառույցներ),
- ընդարձակ կամ ծավալումով (երկգագաթ կառույցներ):

գ) Ըստ ձևաբանական արժեքի՝ առանձնացվում են գոյականական, ածականական, բայական և մակբայական արտահայտություններ՝ իրենց բնորոշ կառուցատիպերով:

դ) Ըստ միջուկային անդամի իմաստային նշանակության՝ զանազանվում են.

- գունանուն բաղադրիչով,
- կենդանու, սողունի անուն և թռչնանուն բաղադրիչներով,
- հատկանուն բաղադրիչով,
- բնության երևույթների անվանումներով արտահայտություններ:

դ) Ըստ տարբերակների տիպերի՝ առանձնացվում են.

- բառային (հոմանշային),
- քերականական (ձևաբանական և շարահյուսական),
- ծավալային արտահայտություններ:

ե) Գրաբարյան որոշ նախադրությունների գործառական արժեքի կենսունակություն, ինչպես՝ «զերդ», «նման», «օրինակ», «փոխանակ», «հանգոյն», «գունակ» և այլն:

զ) Գունանուն բաղադրիչներով որոշ ՊՀ-ներ հանդիպում են առանց նախադրությունների:

է) «Ողբ Եդեսիոյ» պոեմի ՊՀ-ների ձևակազմական կաղապարների ուսումնասիրությունը և նրանց ռճական դերի բացահայտումը, լայն առումով Շնորհալու մյուս պոեմների՝ «Յիսուս որդի», «Յաղագս երկնի եւ զարդուց նորա», ինչպես նաև «Հաւատով խոստովանիմ» աղոթքի, տաղերի, գանձերի, հանելուկների և չափածո այլ քերթվածքներում խնդրո առարկայի համակողմանի հետազոտությունը կարող է ամբողջացնել ընդհանուր հայերենի ռճական համակարգի նկարագրությունը և դառնալ լեզվի զարգացման տվյալ ենթաշրջանի ռճական տիպաբանության չափանիշ:

LALIK KHACHATRYAN

**FORMAL MODELS OF FIGURATIVE COMPARISONS
IN THE POEM “ELEGY ON THE CAPTURE OF EDESSA”
BY NERSÈS SHNORHALI**

Key words: Elegy on the Capture of Edessa, figurative comparison, formative model, metaphor, preposition, morphological meaning, nuclear component, color component, variants, stylistic meaning.

Formative models of figurative comparisons (FC) have decisive importance in the stylistic system of the poem “Elegy on the Capture of Edessa” by Nerses Shnorhali, revealing both the sophistication of the author’s style while preserving the inflection patterns of Grabar. In particular, this refers to the viability of the functional meaning of some ancient Armenian prepositions, such as *զերդ*, *հանգոյն*, *գունակ*, *նման*, etc., which are often found in FC.

FC in the poem by Nerses Shnorhali can be classified on various grounds:

a) by part-of-speech: noun (*Որպէս տանջանքն Եգիպտոսին*), adjective (*(Իբրու հմուտ լալեաց բանի)*, verb (*Նստիմ ի սուզ ի տան մթի, որպէս օրէն է սգաւորի*) and adverb (*Զարիւն սրբոց յերկրի հեղին, որպէս հոսանք ջուրց վտակին*),

b) according to semantics of the nuclear component: color name (*Քան զծին սպիտակ լինիք*), names of animals (*Կամ զերդ առիւծ գոչէ առակ*), proper names (*Զերդ Գողիաթ Փղշտացին յոյժ ի հասակդ փհացեր*), names of natural phenomena (*Իբրեւ զծովու ալեաց կուտակ, Ափան գետոց ազի գունակ*),

c) by variation: lexical (*Իբրեւ գազանս վայրենի // Եւ որպէս գայլք*), morphological (*Իբրեւ գազանս // զերդ զգազան*), syntactic synonyms (*Սեաւ զգենում գոյն տխրելի // Սեաւ գոյն զգենում*), variations in volume value (*Զերդ մայր // զերդ մայր՝ որդուվք բերկրեալ յորդոր*).

The study of the structural laws of the FC in the poem “Elegy on the Capture of Edessa” by Nerses Shnorhali and the identification of their stylistic role in a broad sense can complete the description of the Pan-Armenian stylistic system and become the standard of stylistic typology of the development of the language in that era.

ЛАЛИК ХАЧАТРЯН

**ФОРМАЛЬНЫЕ МОДЕЛИ ОБРАЗНЫХ СРАВНЕНИЙ
В ПОЭМЕ «ЭЛЕГИЯ НА ВЗЯТИЕ ЭДЕССЫ» НЕРСЕСА ШНОРАЛИ**

Ключевые слова: «Элегия на взятие Эдессы», образное сравнение, формообразующая модель, метафора, предлог, морфологическое значение, ядерный компонент, цветовой компонент, варианты, стилистическое значение.

Решающее значение в стилистической системе поэмы «Элегия на взятие Эдессы» Нерсеса Шнорали имеют формообразующие модели образных сравнений (ОС), которые раскрывают высокий уровень авторского стиля и в то же время, сохраняя словоизменительные закономерности древнеармянского языка, выявляют его новые качества, обусловленные особенностью речи автора. В частности, это относится к жизнеспособности функционального значения некоторых древнеармянских предлогов, таких как գերդ, հանգոյն, գունակ, նւան и т. д., которые часто встречаются в ОС.

ОС в поэме Н. Шнорали можно классифицировать по разным основаниям:

а) по частеречному значению: существительное (Ռալէս տանջանքն եգիպտոսին), прилагательное (Իբրև հմնս լալեաց բանի), глагол (Նստիմ ի սուգ ի տան մթի, որպէս օրէն է սգաւորի) и наречие (Զարիւն սրբոց յերկրի հեղին, որպէս հոսանք ջուրց վտակին),

б) по лексическому значению ядерного компонента: название цвета (Քան գծին սպիտակ լինիք), название животного (Կամ գերդ առիւծ գոչ առակ), имя собственное (Զերդ Գողիար Փղշտացին յոյժ ի հասակդ փացեր), название природного явления (Իբրև գծովու ալեաց կուտակ, Ափան գետոց ազի գունակ),

в) по типу вариации: лексические (Իբրև գագանս վայրենի // Եւ որպէս գայլ), морфологические (Իբրև գագանս // գերդ գգագան), синтаксические синонимы (Սեալ զգեննս գոյն տիրելի // Սեալ գոյն զգեննս), вариации по значению объёма (Զերդ մայր // գերդ մայր՝ որդովք բերկրեալ յորդոր).

Изучение структурных закономерностей ОС в поэме «Элегия на взятии Эдессы» Нерсеса Шнорали и выявление их стилистической роли в широком смысле может завершить описание общеармянской стилистической системы древнего периода и стать эталоном стилистической типологии развития языка в ту эпоху.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլաձորի համալսարանի ուսուցիչները և սաները..... 5

ՀՐԱՆՏ ՕՀԱՆՅԱՆ

Դավիթ-Դանիելյան պալաթարը և Լազարյանները..... 34

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱՅԱՆԵ ԹԵՐԶՅԱՆ

Գևորգ Կաղի ժամանակաշրջանի ճշգրտման փորձ..... 54

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԻՆԵ ՄՈՍԻԿՅԱՆ

«Խառնվածք» հասկացությունից միջնադարյան ընկալումները..... 61

«ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ՝ ԲԱԶՄԱՇՆՈՐՀ ՀԱՅՐԱՊԵՏԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻՑ (2023 թ. հունիսի 21-23)

ԶԱՔԱՐԻԱ Ծ. ՎՐԴ. ԲԱՂՈՒՄՅԱՆ

Հայոց եկեղեցու անդամագրությունն ըստ
«Արևորդիների դարձի մասին» Ս. Ներսես Շնորհալու թղթի..... 83

ԷՌԵԱ ՄԱՆԵԱ ՇԻՐԻՆՅԱՆ

Ներսես Դ Կլայեցի կաթողիկոսի «Շնորհալի»
պատվանվան մասին..... 97

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Ներսես Շնորհալին խրատական բանաստեղծության հիմնադիր..... 116

ԼԱԼԻԿ ԽԱԶՍՏՐՅԱՆ

Պատկերավոր համեմատությունների ձևակազմական
կաղապարները Ներսես Շնորհալու «Ողբ եղեսիոյ» պոեմում..... 127

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

Ներսես Շնորհալի և Կոմիտաս վարդապետ..... 139

ՄՀԵՐ ՆԱՎՈՅԱՆ

Հայկական վերածննդի երաժշտաբանաստեղծական արվեստի որոշ
բնութագրիչներ՝ Ս. Ներսես Շնորհալու ժառանգության մեջ..... 156

ՀԱՍՄԻԿ ԻՐԻՑՅԱՆ

Ներսես Շնորհալու նորահայտ բնագիրը ՄՄ 3839 ձեռագրում (անգլ.)..... 166

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՍԵՅՆԳԵՀՆԱՍԻՄ ՖԱԹԵՄԻ, ՀԱՅԿԱԶ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Մատենադարանի այլալեզու ֆոնդի շորս միավորի նկարագրություն (անգլ.)..... 179

ՍԱԹԵՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երկու հնատիպ հմայիլների ուսումնասիրության հետքերով..... 195

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԷՍԹԵՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գրիգոր Լուսավորչին վերագրվող տեսիլ-հարցումը (համեմատական բնագիր)..... 212

ԱՐԵՎԻԿ ԱՐԱԲՅԱՆ

Առաքել Սյունեցու «Ղազարու յարութեան» և «Մեծատան եւ Ղազարու» անտիպ տաղերը..... 251

ԳՐԱԵՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ

Զաֆարիա Ծայրագոյն վարդապետ Բաղումեան, Կիրակոս Երզնկացու՝ Սուրբ Եւագր Պոնտացու երկերի լուծմունքները, խմբագիր՝ Գ. Տէր-Վարդանեան, Երևան, Մատենադարան, 2022..... 260

ԱՐՄԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Les Arts Libéraux et les Sciences dans l' Arménie Ancienne et Médiévale («Ազատ արվեստները և գիտությունները հին և միջնադարյան Հայաստանում»), sous la direction de Valentina Calzolari, Paris: Vrin 2022..... 270

ԲԱՆԱՎԵՃ

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Դարձյալ հին Երևանի աշտարակի և երկուերեսնի եկեղեցու պարզաբանման շուրջ..... 280

Բանբեր Մատենադարանի հանդեսի հոդվածների ձևավորմանը վերաբերող պահանջներ..... 296

CONTENTS

HISTORY

KAREN MATEVOSIAN

The Teachers and Students of Gladzor University.....5

HRANT OHANYAN

The Role of the Lazaryans in the Davit-Daniel Conflict.....34

PHILOLOGY

GAYANE TERZIAN

An Attempt at Dating the Life of Gevorg Kagh.....54

NATURAL SCIENCES

KARINE MOSIKYAN

Medieval Conceptions of Temperament.....61

PROCEEDINGS OF THE 6TH INTERNATIONAL CONFERENCE “NERSĒS SHNORHALI THE GRACIOUS PATRIARCH” (June 21-23, 2023)

PROTO-ARCHIMANDRITE ZACHARIA BAGHUMYAN

Membership in the Armenian Church According to St. Nersēs
Gracious' Letter “On The Conversion of the Sons of the Sun”.....83

ERNA MANEA SHIRINIAN

About the Title “Graceful” of Catholicos
Nersēs IV Klayets'i.....97

VANO EGHIAZARYAN

Nersēs Shnorhali as the Founder of the Genre
of Didactic Poetry.....116

LALIK KHACHATRYAN

Formal Models of Figurative Comparisons
in the Poem “Elegy on the Capture of Edessa”
by Nersēs Shnorhali.....127

LUSINE SAHAKYAN

Nersēs Shnorhali And Komitas Vardapet.....139

MHER NAVOYAN

Some Characteristics of the Musical and Poetic Art
of the Armenian Renaissance in the Heritage
of St. Nerses Shnorhali 156

HASMIK IRITSYAN

A Newly Discovered Work of Nersēs Shnorhali
in Ms M3839 166

BIBLIOGRAPHY**SAYEDEHNASIM FATEMI, HAYKAZ GEVORGYAN**

Description of Four Units of Matenadaran's Foreign Language Fund 179

SATENIK GRIGORYAN

On Two 18th C. Scroll Amulets 195

PUBLICATIONS**ESTER PETROSYAN**

The Revelation Attributed to Gregory the Illuminator 212

AREVIK ARABYAN

Arak‘el Siwnets‘i and his Unpublished Verses
“The Resurrection of Lazarus” and “The Rich Man and Lazarus” 251

BOOK REVIEWS**ARUSYAK TAMRAZYAN**

Proto-Archimandrite Zacharia Baghumyan, *Kirakos Erznkais‘i’s
Commentaries on Saint Evagrius Ponticus’ Works*, Yerevan, 2022 260

ARMINE MELKONYAN

Les Arts Libéraux et les Sciences dans l’Arménie Ancienne et Médiévale,
Sous la direction de Valentina Calzolari, Paris: Vrin 2022 270

DISCUSSION**ARSEN HARUTYUNYAN**

Once More on the Interpretation of Old Yerevan’s Tower
and Church Yerkueresni (St. Paul and Peter) 280

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

КАРЕН МАТЕВОСЯН

Преподаватели и учащиеся Гладзорского университета 5

ГРАНТ ОГАНЯН

Противостояние Давид-Даниэл и Лазаревы 34

ФИЛОЛОГИЯ

ГАЯНЕ ТЕРЗЯН

Опыт уточнения времени жизни Геворга Кага 54

ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

КАРИНЕ МОСИКЯН

Средневековые представления о темпераменте 61

**ИЗ МАТЕРИАЛОВ 6-ОЙ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ
“БЛАГОДАТНЫЙ ПАТРИАРХ НЕРСЕС ШНОРАЛИ”
(21-23 июня, 2023 г.)**

ПРОТОАРХИМАНДРИТ, ЗАХАРИЯ БАГУМЯН

Принятие в лоно армянской церкви согласно посланию Св. Нерсеса Благодатного «Об обращении Сынов Солнца» 83

ЭРНА МАНЕА ШИРИНЯН

О титуле «Шнорали» католикоса Нерсеса IV Клаеци 97

ВАНО ЕГИАЗАРЯН

Нерсес Благодатный – основоположник жанра поучительных стихотворений 116

ЛАЛИК ХАЧАТРЯН

Формальные модели образных сравнений в поэме «Элегия на взятие Эдессы» Нерсеса Шнорали 127

ЛУСИНЕ СААКЯН

Нерсес Шнорали и Комитас Архимандрит 139

МГЕР НАВОЯН

Некоторые характеристики музыкально-поэтического искусства армянского Возрождения в наследии Св. Нерсеса Шнорали.....156

АСМИК ИРИЦЯН

Новонайденный текст Нерсеса Шнорали в рукописи № 3839 из собрания Матенадарана.....166

БИБЛИОГРАФИЯ**ФАТЕМИ СЕЙЕДЕХНАСИМ, АЙКАЗ ГЕВОРГЯН**

Описание четырех единиц иноязычного фонда Матенадарана.....179

САТЕНИК ГРИГОРЯН

О двух старопечатных свитках-оберегах XVIII в.....195

ПУБЛИКАЦИИ**ЭСТЕР ПЕТРОСЯН**

Откровение, приписываемое Григорию Просветителю.....212

АРЕВИК АРАБЯН

Неизданные стихи “О воскрешении Лазаря” и “О богаче и Лазаре” Аракела Сюнеци.....251

РЕЦЕНЗИИ**АРУСЯК ТАМРАЗЯН**

Протоархимандрит Захария Багумян, *Толкование Киракоса Ерзнкаци на сочинения Евагрия Понтийского*, Ереван, 2022.....260

АРМИНЕ МЕЛКОНЯН

Les Arts Libéraux et les Sciences dans l'Arménie Ancienne et Médiévale, Sous la direction de Valentina Calzolari, Paris: Vrin 2022.....270

ДИСКУССИЯ**АРСЕН АРУТЮНЯН**

Вновь об интерпретации башни и церкви Еркуересни (Св. Павла и Петра) старого Еревана.....280

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 36

BULLETIN OF MATENADARAN

Volume 36

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 36

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգադյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝ *Ձեռ. եղմ. 365՝ Եսայի Նչեցին Գլաձորի համալսարանի
ուսուցիչների և սաների հետ*

Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 19

տպամանակ՝ 150

Մատենադարան

Մետրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի
հրատարակչական բաժին, ք. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի թվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/